

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՍՊՈՐՏՈՒՄ
ԴՈՊԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՅՈՒՄՆԵՐԻ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 նոյեմբերի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Մ. Թովուզյանի,
Վ.Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դափարանի
մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դարական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի
հոկտեմբերի 19-ին Փարիզում ստորագրված՝ Սպորտում դոպինգի դեմ պայքարի
մասին միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝
Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ ՆՆ սահմա-
նադրական դափարան 12.10.2009թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրա-
պետության Նախագահի ներկայացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության սպորտի
եւ երիտասարդության հարցերի նախարար Ա. Գրիգորյանի գրավոր բացատրու-

թյունը, հեղափոխելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրվել է 2005թ. հոկտեմբերի 19-ին՝ Փարիզում: Կոնվենցիայի նպատակն է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության ծրագրի եւ ռազմավարության շրջանակներում նպաստել սպորտի եւ ֆիզիկական դաստիարակության բնագավառում դոպինգի օգրագործման կանխարգելմանն ու դոպինգի դեմ պայքարին՝ նպատակ ունենալով վերացնել այն:

2. Կոնվենցիայի բաղկացուցիչ մասն են կազմում երկու հավելվածներ, որոնցում սահմանված են արգելված նյութերի ցանկը եւ միջազգային չափանիշները, ինչպես նաեւ բուժման նպատակով օգրագործման թույլտվության փրամադրման միջազգային չափանիշները:

3. Կոնվենցիայի գերագույն մարմինն է Մասնակիցների խորհրդաժողովը, որն իր հերթական նիստերը գումարում է երկու փարին մեկ, իսկ արտահերթ նիստ գումարվում է Մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդի պահանջով:

4. Կոնվենցիայով Նայասպանի Նանրապետությունն սրանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Նամաշխարհային հակադոպինգային օրենսգրքի սկզբունքներին համապատասխան անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ներպետական եւ միջազգային մակարդակներում խրախուսելու միջազգային համագործակցության բոլոր ձեւերը՝ ուղղված մարզիկների պաշտպանության ապահովմանը, սպորտում էթիկայի սկզբունքների ապահովմանը եւ հեղափոխությունների արդյունքների համապետ օգրագործմանը, ինչպես նաեւ աջակցել դոպինգի դեմ պայքարի ոլորտում բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցությունը,

- միջոցներ ձեռնարկել նյութերի (սուբստանցների) եւ միջոցների մարջելիության սահմանափակման ուղղությամբ՝ սպորտում մարզիկների կողմից դրանց օգրագործման սահմանափակման նպատակով, եթե դրանք չեն օգրագործվում բուժման նպատակով օգրագործման թույլտվության հիման վրա, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում այդ խնդրի իրականացման համար սրեղծել ներպետական համապատասխան մարմիններ,

- անհրաժեշտության դեպքում ՏՏ բյուջեի շրջանակներում փրամադրել միջոցներ բոլոր մարզաձեւերում թեստավորման ազգային ծրագրերի ֆինանսա-

վորման համար կամ օգնություն ցուցաբերել մարզական եւ հակադոպինգային կազմակերպություններին դոպինգ-սպուգումը ֆինանսավորելու համար ուղղակի սուբսիդիաների կամ դրամաշնորհների տեսքով, կամ այդ կազմակերպություններին փրամադրվող սուբսիդիաների կամ դրամաշնորհների ընդհանուր գումարը որոշելիս այդ սպուգման համար նախատեսված ծախսերը հաշվանցելով,

- դադարեցնել այն մարզիկին կամ նրան օժանդակող անձնակազմին փրամադրվող ֆինանսական աջակցությունը, որոնց մասնակցությունը կասեցվել էր հակադոպինգային կանոնների խախտման հետեւանքով, ինչպես նաեւ մասամբ կամ ամբողջությամբ դադարեցնել ցանկացած մարզական կամ հակադոպինգային կազմակերպության ֆինանսական աջակցությունը, որը խախտում է օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոնները,

- պաշտպանել պեպական մարմինների եւ օլիմպիական շարժման կողմից Նամաշխարհային հակադոպինգային գործակալության հաստատված հիմնական փարեկան բյուջեն հավասարաչափ ֆինանսավորելու սկզբունքը,

- մշակել կամ իրականացնել դոպինգի դեմ պայքարի վերաբերյալ կրթական եւ վերապատրաստման ծրագրեր եւ աջակցել դրանց, խրախուսել համապատասխան իրավասու մասնագիտացված ասոցիացիաներին եւ հաստատություններին՝ մշակելու եւ կիրառելու սպորտում դոպինգի դեմ պայքարի մասին վարվեցողության կանոնագիրք,

- անհրաժեշտության դեպքում փոխանակել անցկացրած հակադոպինգային հետազոտությունների արդյունքները մասնակից մյուս պեպությունների եւ Նամաշխարհային հակադոպինգային գործակալության հետ,

- երկու փարին մեկ անգամ Մասնակիցների խորհրդաժողով ներկայացնել ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

5. Կոնվենցիայով սահմանված են նաեւ մոնիթորինգի իրականացման կարգը, կոնվենցիայում եւ դրան կից հավելվածներում փոփոխություններ կատարելու ընթացակարգը, այն վավերացնելու, ընդունելու, վերապահումներ անելու, հաստատելու կամ միանալու, ինչպես նաեւ այն ուժի մեջ մտնելու եւ չեղյալ հայտարարելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապեպության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրա-

պետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2005 թվականի հոկտեմբերի 19-ին Փարիզում ստորագրված՝ Սպորտում դոպինգի դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 նոյեմբերի 2009 թվականի
ՍԴՈ- 838